

ՄԱՏԻ ՅՈՒՆՍՈՒ

ՉԱՐԻ ՔԱՅԱՆԱՆ

Թարգմանիչներ՝
Ալեքսանդր և Կարինե Աղաբեկյաններ



Գ Ի Տ Ա Ն Ք
Երևան 2012



This work has been published with the financial assistance
of FILI – Finnish Literature Exchange
FILI – Finnish Literature Exchange on tukenut tämän kirjan
kääntämistä

Matti-Yrjänä Joensuu, *Harjunpää ja pahan pappi*

Մատի Յոենսու

Չարի քահանան – Վեպ, եր.: Գիտանք, 2012, 248 էջ.

Վեպը երկրորդ գիրքն է *XXI դարի քրեավեպ* նոր մատենաշարի, որը ներառում է տարբեր ազգերի ներկայումս ստեղծագործող լավագույն գրողների երկերի հայերեն թարգմանությունները:

Յեւսիսկիում մետրոյով երթեկեկելը ավելի ու ավելի վտանգավոր է դառնում: Գնացքակառքերի միջև հայտնված տղամարդու դիակը մտածել է տալիս ինքնասպանության մասին: Սակայն ավագ քննիչ Տիմո Չարյունպան դրան չի հավատում: Իր կարծիքով դա կանխամտածված ու նախապատրաստված սպանություն է...

Եվ մինչ նա գործի է անցնում, մայրաքաղաքի մետրոյի ցանցի խուլ անկյուններից մեկում մի պայծառատես՝ իրեն Մամո աստվածության քահանա պատկերացնելով, հանուն նրա զոհաբերություններ է անում: Յետևյալ զոհը արդեն ընտրված է...

Խուզարկու Չարյունպայի մասին հեղինակի իններորդ վեպն է:

2010թ. վեպի հիման վրա շարժանկար է նկարահանվել:

Յեղինակը հայտնի գրող է, որը մինչ այդ երկար տարիներ եղել է Յեւսիսկիի քրեական ոստիկանության սպա: Նրա վեպերը թարգմանվել են ավելի քան 20 երկրում:

ISBN 978-9939-810-18-8

© Matti-Yrjänä Joensuu, 2003

© Գիտանք, հայերեն թարգմանության և ձևավորման համար, 2012

1. ՊԱՅԱԿԸ

Ինչ-որ մեկը անընդհատ կանչում էր իրեն: Կարծես փոքր ճյուղով խփում էր գլխին:

- Միկո, Միկո:

Բայց նա չէր պատասխանում: Չէր ուզում:

- Միկո:

Նա չէր ցանկանում նորից դառնալ Միկո՝ կառչած հոր ոտքին կամ վախից դողալով կախված նրա քրտնած պարանոցին: Չէր ցանկանում հսկել դուռը, քանի որ այն չար էր և վատ բաներ էր ատում: Իր միակ ցանկությունն էր կծկվել Անիտրայի բնում՝ զգրոցի վերևում, լինել նրա փոքրիկը, որովհետև Անիտրան բարի էր. երբեք նրան չէր կտցահարում, չէր ճանկում նրա տուտուզը կամ քաշում պուպուլից: Թույլ էր տալիս շոյել իր փետուրները, ինչը նույնքան հաճելի էր, որքան շաքարաբամբակ ուտելը:

Բայց շաքարաբամբակ ուտելուց հետո նա միշտ տարօրինակ սարսուռ էր զգում, ճիշտ այնպես, ինչպես այն ժամանակ, երբ ինքը առանց թույլտվության գնացել էր զբոսապուրակ, կամ ինչպես մայիսի 1-ին, երբ տաքսին ջնջխել էր մի աղավնու: Նրա մի աչքը գլխից դուրս էր ցայտել, և Կասպերը այն կախել էր Տուկայի հերակալի ծայրից: Աչքը անշարժ նայում էր իրենց, ինչպես հայրիկի ծխախոտի ծայրը գիշերվա մթությունից: Փետուրների քնքշությունը այնպիսի զգացում էր հաղորդում, իբր Անիտրան իր իսկական մայրիկն է, իսկ մայրիկը կեղծ մայրիկ է՝ ինչ-որ անծանոթ չար տղայի փնթփնթան մայրիկ, և նրա մարմնով նորից ծակծկող սարսուռ անցավ, կարծես իր մազերից քաշելիս լինեին: Հանգստանալու համար նա սկսեց մտածել զգրոցի ոտքերի մասին՝ մագիլներով և ամեն ինչով մուգ կանաչ առյուծի թաթերի: Թեև փայտից էին, ոչ ոք չէր համարձակվում դրանք կոխել, նույնիսկ շենքի չաղ պահակը՝ ականջներում բուսնած իր զզվելի մազերով:

- Մի՛կո, - դարձյալ կանչեցին նրան, և ինչ-որ մեկը հառաչեց.

- Նրանք արդեն սկսեցին իրար սպանե՞լ:

Այդ ինչ-որ մեկը հենց Միկոն էր: Նա անմիջապես նստեց. իրականում գոյություն չունեին ոչ Անհտորայի բույնը, ոչ շաքարաբամբակը, ոչ էլ Անհտորան: Ոչ մի լավ բան իրականում գոյություն չունեիր: Դեռևս մութ էր, դեռ գիշեր էր, նույն չար գիշերը: Նա արագ շոշափեց ներքնակը և իր ննջագգեստի տաբատը. այո, էլի թրջել է անկողինը, թեև այս անգամ շատ քիչ, *ո՛ւ՛Ֆ*: Մինչև առավոտ ամեն ինչ կչորանա, և ինքը ստիպված չի լինի գնալ խոհանոց՝ գոտին բերելու: Դա կախված էր դռան կողքի սրբիչների կախիչից՝ այնքան բարձր, որ վերցնելու համար նա պետք է աթոռին կանգներ:

- Չէ, դեռ ոչ, - շշմջաց ինչ-որ մեկը հենց նրա կողքին: Միկոն շրջեց գլուխը ու տեսավ նրան, և ձեռքերն ու ոտքերը աճապարանքով վերադարձրեց ապահով ծածկոցի տակ: Դա մարդկամախթան էր՝ սպիտակ դեմքով ու սպիտակ ձեռքերով: Մարմնի ոչ մի այլ մաս չէր նշմարվում: Հաստատ, վրան միս ու մաշկ չկար: Նրանից ուղղակի փտած ոսկորի հոտ էր գալիս: Միկոն զգում էր նրա ծանր հայացքը սև ակնախոռոչների միջով:

- Մի՞կո, - կրկին շշմջաց հրեշը: Ձայնը շատ նման էր Մարյայի ձայնին, երբ նա լացում էր: Ասես թե խոսելիս սառնաշաքար էր ծծում: Գլուխն էլ Մարյայի գլխի պես մեղմորեն կողքից կողք էր ճոճվում. *թիթ, թաթ*: Բայց դա իսկապես Մարյան էր:

- Հայրիկը արդեն երեք ժխախտ է ծխել: Մյուսն էլ վառվում է մոխրամանում: Հիմա մեծ քայլերով չափչփում է սենյակը, գիտես՝ ինչպես... Գնա, հիմա քո հերթն է:

- Արի միասին գնանք:

- Քո հերթն է:

- Քեզ իմ գորտամարդուկը կտամ:

Լսվում էր զարթուցիչի *թիթ-թաթը*, սլաքը պտտվում էր: Ներքևի հարկում ինչ-որ մեկը քաշեց զուգարանի ջուրը, թեև գիշերը դա արգելված էր: Փողոցով անցնող ինքնաշարժը տարօրինակ լույս գցեց առաստաղին. կարծես առանց բթամատի թաթման լիներ: Լույսը գալարվեց և ցած սահեց պատի երկայնքով, սակայն հատակին չհասավ: Մարյայի քթից սկսեց ծորալ: Նա թաքուն սրբեց

ծլուլը գիշերանոցի թևքով:

- Ես շատ հոգնած եմ, - ֆսֆսաց Մարյան՝ ծածկելով դեմքը ձեռքերով, որպեսզի չարթնացնի Սառային, որը անկասկած նույնպես կսկսեր լաց լինել: Նա գիտեր ինչպես անել: Միկոն նույնպես: Երկուսն էլ մեծ փորձ ունեին: - Բացի այդ, փորս ցավում է: Եվ առավոտյան ե՛ս պետք է դպրոց գնամ, ոչ թե դու:

- Վերջ տուր, Մարյա, - առարկեց Միկոն: Նա միշտ վախենում էր, երբ տեսնում էր քրոջը լալիս: Մարյան արդեն մեծ էր, կրտսեր դպրոց էր գնում: Միկոն բռնեց Ռուս-Ռուսի ձեռքը և դուրս սողաց մահճակալից: Հատակը սաստիկ սառն էր թվում ոտքերի տակ: Ասես թիթեղ լիներ, որին շները չհիշի էին արել ձմռանը: Բայց նրան հաջողվեց քրոջից բաժանող մի քանի քայլն անել, և նրանք գրկախառնվեցին՝ օրորվելով, ասես պարելիս լինեին: Միկոն իրեն նորից լավ զգաց և մտածեց, որ ի վերջո գուցե այս երեկո ոչ ոք չմեռնի, որ եկող ամառ ինքը դեռ կարող է էիկա հոպարի հետ գնալ լճում թիավարելու:

- Լավ, նրանց մենակ կհսկեմ, - խոստացավ նա սիրտ առնելով, թեև շուրթերը դողում էին ճիշտ այնպես, ինչպես այն ժամանակ, երբ նա վատ բառեր էր ասել, և բերանը մաքրել էին: - Բայց դու այնուամենայնիվ կարող ես երբեմն խաղալ իմ գորտամարդուկով:

- Դու էլ՝ իմ ռետինե գնդակով, բայց մի քիչ: Ինձ կարթնացնես, եթե նրանք սկսեն: Հակառակ դեպքում կթողնես՝ քնեմ, մինչև որ ժամացույցը զարկի: Բայց ոչ անմիջապես, լա՞վ: Երկու հարվածից հետո:

- Լավ:

- Բարի գիշեր, - փսփսաց Մարյան: Հետո Միկոն լսեց նրա բոբիկ ոտքերի սվվոցը հատակին, ապա խշխշոց, երբ նա մտավ անկողին, հետո թեթև մի շշուռջ. «Տե՛ր Աստված, պառկում եմ քնելու, Քո ձեռքն եմ հանձնում իմ հոգին: Քեզ եմ ապավինում: Ամե՛ն»:
Սավանը կրկին խշխշաց, երբ նա շրջվեց կողքի, և լռություն հաստատվեց: Լսվում էր միայն, թե ինչպես է Սառան ծծում ծծակը:

Միկոն մենակ էր:

Նա չէր համարձակվում շուրջը նայել:

Գիշերը տունը վախենալի էր: Նույնիսկ դրա սիրտն էր սև դառ-

նում, թեև իրականում դա պատահում է միայն չար մարդկանց: Այդպիսիները իրավունք չունեն երկինք համբարձվելու: Ամեն դեպքում, նա գիտեր, որ սեղանը այլևս իր սովորական տեղում չէ: Դրա փոխարեն այնտեղ գարշահոտ երախով մի արջ էր դարանել: Նաև գիտեր, որ գզրոցի առաջ երեք վագրածի էր կանգնած՝ աչքերը իբր դիմակավորած, բայց նրանք խարդախում էին: Ճայում էին իրենց մատների արանքով և կվրնջային, եթե ինքը նրանց նայեր: Իսկ արջը կկատաղեր, եթե ինչ-որ մեկը իրեն նայեր: Ահա թե ինչու Միկոն չէր համարձակվում նայել նրանցից որևէ մեկին:

Բայց նա մի բան էր նկատել. թղթի աղբարկղը դարձյալ լի էր փուչիկներով: Եվ դա վախեցրեց իրեն: Նա ատամների մեջ առավ ստորին շրթունքն ու սկսեց կծոտել: Սարսափահար էր, որովհետև գիտեր, որ իրականում դրանք ոչ թե փուչիկներ էին, այլ չար երեխաների գլուխներ: Աստված սպանել էր նրանց:

- Մարյա, - շնչաց Միկոն այնքան կամացուկ, որ միայն շուրթերը շարժվեցին: Մի պահ սպասեց, բայց քանի որ լռությունը չխախտվեց, նա շրջվեց: Նախասենյակից թույլ լույս էր թափանցում, բայց դա բարի չէր. չար լույս էր, կարծես ինչ-որ մեկը ցեխոտ ձեռքը դրել էր գրպանի լապտերի առաջ: Նա չէր ցանկանում գնալ այնտեղ: Երբ փորձեց առաջ շարժվել՝ վախն ավելի աճեց, այնքան, որ Միկոն սկսեց դողալ: Ռում-Ռումին հպեց իր դեմքին. Ռում-Ռումն էլ էր դողում, և աչքերը թաց էին: Միկոն սփոփեց նրան, շոյեց մազաթափ մեջքը և ականջին ինչ-որ բան շնչաց. հավանաբար ասածը շվեդերեն էր կամ մի այլ օտար լեզվով, քանի որ ինքն էլ բան չհասկացավ:

Քիչ հետո նա դռան մոտ էր. չէր նկատել, թե ինչպես էր այնտեղ հասել, բայց այնուամենայնիվ այդտեղ էր: Այստեղ ավելի լուսավոր էր, ու թեև նա սկզբից ևեթ ձայներ էր լսում, միայն այժմ կարողացավ զանազանել դրանք: Օդը հագեցած էր դրանցով՝ ասես կատաղած թռչունների կռավոցով:

- Պատասխանի՛ր, գրողը տանի: Դա գրպանումդ էր, թե՞ չէ:
- Ասացի, որ էլ չեմ ուզում խոսել դրա մասին:
- Մեկ է՝ ուզես-չուզես, պիտի խոսենք: Որպեսզի էլ երբեք խոսելու կարիք չլինի:

- Բայց, գրողը տանի, քեզ ո՞վ է թույլ տվել փորփրել ուրիշի գրպանները: Այնքան հիմար ես՝ անգամ չես հասկանում, որ դա ընդամենը նմուշ է... Փոստով եկած մի ամտեր խղճուկ ձրի նմուշ:

- Դե իհարկե: Այդ ո՞նց իսկույն չհասկացա: Ամեն օր պահպանակների տարափ է թափվում փոստարկղը...

- Թա՛րգ տուր, Աստվա՛ծ իմ: Ես ո՞նց կարող եմ հիշել: Գուցե գործատեղի տղաներից մեկի կատա՞կն է:

- Հա՛, բա ո՞նց: Այդ դո՛ւ ես տեղովդ կատակ: Էլի՞ այդ պոռնիկ Հանիկախնենի հետ ես եղել:

- Թա՛րգ տուր, հերիք է գոռաս:

Միկոն ուղիղ դռան հետևում էր: Նեղ բացվածքի միջով չիշիկի պես դեղին լույս էր ներս թափանցում: Այդտեղից նաև ծխախոտի հոտ էր փչում և հայիոյանք էր լսվում:

Դռան այն կողմում խոհանոցն էր և մայրիկն ու հայրիկը: Նրանք էին գոռում իրար վրա: Սակայն նրանք նման չէին մայրիկի ու հայրիկի, օտարներ էին թվում, մի զույգ կատաղած ավազակ: Նա ծռմռեց շրթունքները՝ մտածելով այն մասին, որ նրանք կարող են ընդմիշտ մնալ այդպիսին: Դեղին մրջյուններ սկսեցին խլրտալ նրա այտերին, փորը գալարվեց: Հատակից անտեսանելի պարաններ էին դուրս եկել և նրան ցած էին քաշում: Լրիվ ուժասպառ էր, և գրեթե ցանկանում էր, որ պարանները իրեն գետին տապալեն:

- Զվեցրի՛ր քո այդ ծխելով: Ամբողջ տունը կրակի բերանն ես տալու:

- Շատ էլ լավ կանեն: Վերջապես կազատվեմ քեզնից էլ, երեխեքից էլ՝ բոլորից: Հաստատ...

- Ի՞նչ կանես: Էլի սպառնում ես մեզ սպանե՞լ, հա՞:

- Ռեխդ փակի՛ր, ա՛յ կնիկ:

- Ըհը՛, ուրեմն մեղավորը ե՞ս եմ: Ուրեմն սպանի՛ր ինձ: Ավելի լավ է մեռնեմ, քան քեզ պես անասունի կինը լինեմ:

- Շա՛ն կնիկ:

- Սպանի՛ր ինձ, դե՛, սպանի՛ր:

- Գրողը տանի, հենց դա էլ անելու եմ:

Աթոռի ոտքերը ճռնչացին, և ասես գազանի մոնչոց լսվեց: Հետո

ինչ-որ բան շրխկաց հատակին ու ջարդուփշուր եղավ: Միկոն պատկերացրեց, թե խոհանոցը լի է ամեն կողմ թռչող նիզակներով՝ սուր նիզակներով, որոնք խոցում էին մարմինը՝ մեջը մեծ անցքեր անելով: Հասկացավ, որ պետք է անհապաղ արթնացնել Մարյային, իրենք պետք է շտապեն փրկել մայրիկին ու հայրիկին, դա իրենց գործն էր: Բայց նույն պահին հիշեց Պահարանի հրեշին և քարացավ՝ անկարող լինելով շարժվել տեղից: Սառը, կպչուն քրտինքը սկսեց ծորալ մազերից:

Գիշերը Պահարանի հրեշը դարան էր մտնում նախասենյակում: Ցերեկվա ընթացքում թաքնվում էր պատի ներսը. կարող էր նույնիսկ քար ուտել, այդ պատճառով Միկոն նրան երբեք չէր տեսել: Իսկ Մարյան բազմիցս տեսել էր: Մի գիշեր Պահարանի հրեշը գրեթե ճանկել էր Մարյային, երբ նա գնացել էր չիշիկ անելու: Նա փոքր-ինչ նման էր գորշուկաշան, բայց առանց պոչի ու թաթերի: Նախ աչքերին թույն էր թքում, որը այրում էր ու կուրացնում: Հետո հետույքի կամ ներբանների միջով մտնում էր մաշկի տակ և սկսում խժռել մարմինը: Անհնար էր որևէ բան անել գոռալուց բացի: Վերջում դանդաղ ծամելով ուտում էր սիրտը, և մարդը մեռնում էր:

Միկոն սարսափի խեղդված ճիչ արձակեց: Նա համոզված էր, որ Պահարանի հրեշը ուղիղ իր հետևում է: Անգամ թեթև աղմուկ էր լսում: Նա գլուխը թեքեց. այո, այժմ միանգամայն վստահ էր, այնպիսի ծայն էր լսվում, ասես մի կենդանի հևիհև սողում է հատակին: Ի՞նչ անել: Նա աչքերը պինդ փակեց, ձեռքերը սեղմեց հետույքի թշերին և սկսեց ոտքերը հերթով շատ բարձր բարձրացնել: Համարյա թռչում էր: Ամբողջ սրտով ցանկանում էր, որ մայրիկն ու հայրիկը իրեն տեսնեն ու զան օգնության: Եվ անընդհատ կամացուկ շշնջում էր.

- Մայրի՛կ, հայրի՛կ, Տե՛ր Աստված, քեզ եմ ապավինում, մայրի՛կ, հայրի՛կ...

- Մի՛կո, Մի՛կո:

- Ի՞նչ:

- Ինչն՞ է սա այդպես պարում, - հարցրեց Մարյան՝ նրան այնպես ուժեղ թափահարելով, որ Միկոյի ուսերը ցավեցին: Մարյան վա-

ռել էր նախասենյակի լույսը: Բացի կոշիկներից ու գորգից հատակին ոչինչ չկար: - Ինչո՞ւ ինձ չարթնացրիր: Խլացե՞լ ես, ինչ է:

Միայն այդժամ Միկոն գիտակցեց, որ խոհանոցի դռան հետևում անընդհատ գոռգոռոցներ ու կատաղած ճիչեր են հնչում, և մի պահ կարծեց, թե այնտեղ արջ կա: Բայց հետո նաև լսեց «գրո՛ղը տանի» ու «շա՛ն որդի», և հանկարծ այդ ամբողջ անուկ-աղաղակի մեջ լսվեց մայրիկի ճիչը.

- Օգնե՛ք:

Մարյան թափով բացեց դուռը. օդում ծուխ էր կախված, աթոռները շուռ տված էին գետին: Մոխրամանում բազմաթիվ ծխուկներ էին այրվում, և ամեն մեկից դեպի վեր ծուխ էր գալարվում: Մայրիկը կարմրատակած դեմքով մեկնված էր հատակին: Հայրիկը հեծել էր նրան և սեղմում էր կոկորդը: Մարյան քաշեց Միկոյի ձեռքը, և նրանք մխրճվեցին տուրուղմփոցի մեջ՝ ջանալով պոկել հայրիկին մայրիկի կոկորդից: Միկոն քաշում էր հոր վերնաշապկից, Մարյան փորձում էր բաց անել հոր մատները: Կոճակները ատամների պես այս ու այն կողմ էին թռչում: Ամենուրեք ձեռքեր ու ոտքեր էին, չդադարող գոռգոռոցներ՝ «օգնե՛ք», «շա՛ն քած»: Հետո, չիմանալով ինչպես, Միկոն հայտնվեց մարմինների տակ՝ անկարող գեթ մի շարժում անելու: Այլևս ոչինչ չէր տեսնում, միայն ճչոցներ էր լսում և զգում էր հոր քրտնաթոր մեջքի հոտը:

Հետո ամեն ինչ վերջացավ:

Միկոն չիմացավ, թե ինչ կատարվեց: Պարզապես ամեն ինչ դադարեց: Առաջին անգամ չէր: Միկոն շփեց դեմքը և բարձրացավ ծնկներին: Հայրիկը ոտքի վրա էր և սենյակն էր չափչփում՝ հնոցի պես փնջացնելով: Բերանի անկյունից ծուլ էր կախված: Միկոն չցանկացավ նրան ավելի երկար նայել, ամոթ էր զգում, ամոթ՝ ամեն ինչի համար: Հայրիկը աժդահա էր. գլուխը դիպչում էր առաստաղի ջահին. նա անդադար քայլում էր լայն քայլերով, շրջվում էր, քայլում, կրկին շրջվում՝ ավելի ու ավելի նմանվելով արագ շարժվող մարդասպան ռոբոտի: Եվ երբ նա զայրացած էր լինում, նմանվում էր հսկա կրիայի, որն ընդունակ էր ամեն ինչ ջնջիլ իր ատամներով:

- Իմ խե՛ղճ անուշիկներ, - սկսեց հառաչել մայրիկը: Նա նույն-

պես արդեն ոտքի էր կանգնել և մերսում էր կոկորդը: Միկոն դողաց, քանի որ գիտեր՝ նա ինչ է ասելու: Մարյան նույնպես գիտեր և բղավեց նրա թիկունքին.

- Չէ՛, մայրի՛կ: Մայրի՛կ, սո՛ւս:

- Փոքրի՛կ անուշիկներս, - շարունակեց հառաչել մայրիկը: Երևի նա էլ իսկապես վախեցած էր, քանի որ ուսերը ցնցվում էին դողից: - Ձեր հայրիկն ուզում է ինձ սպանել...